ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ԲՄԱՊՁԲ-7/25-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

31.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 17.05.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 7813260 (յոթ միլիոն ութ հարյուր տասներեք հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Պահապան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2շ
ՀՀ ՖՆ Գանձարանական վարչություն	«Հայբիզնսբանկ» ՓԲԸ
հ/հ 900011420079	հ/հ 11500198133700
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00882372
ՊԼ-ի ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
№ ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝	
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ	հատ	630	4494	2831220	230	400
2	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	հատ	630	4488	2827440	230	400
3	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ	հատ	300	3594	1078200		300
4	Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ	հատ	300	3588	1076400	300	

Հավելված N 2
№ ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ	18331200/14	1033620	1033620	1033620	2831220	2831220	2831220	2831220	2831220	2831220
2	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	18331200/15	1032240	1032240	1032240	2827440	2827440	2827440	2827440	2827440	2827440
3	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ	18331200/16				1078200	1078200	1078200	1078200	1078200	1078200
4	Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ	18331200/17	1076400	1076400	1076400	1076400	1076400	1076400	1076400	1076400	1076400

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Կ. ՅՈՒՍՈՖՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ» ՍՊԸ տնօրեն

Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ